Luys Lnyu®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
   6.4. Դրամական փոխանցումներ 17
7. ԱՄՓՈՓՈՒՄ 17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. տարեսկզբից ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպը նախորդ տարվա համեմատ էականորեն ցածր է, ինչը հիմնականում պայմանավորված է նախորդ տարիներին բարձր տնտեսական աճի հիմնական գործոնների չեզոքացմամբ: Բացի այդ, նախորդ տարվա ցուցանիշներում առկա են ոսկերչական իրերի վերաարտահանման ազդեցությունները, որոնք նույնպես չեզոքացել են՝ էապես նվազեցնելով հատկապես արտաքին առևտրի և արդյունաբերության ցուցանիշները: Այդ պայմաններում ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) մարտին կազմել է 3.7% (ի դեպ, նախորդ ամսվա 1.5% ցուցանիշը ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել է, որի արդյունքում այն կազմել է 1.8%), իսկ հունվար-մարտ ամիսների կուտակային ՏԱՑ-ը՝ կազմել է 4.1%՝ հունվար-փետրվարի համեմատ մնալով նույն մակարդակում:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2025թ. հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ի աճին ամենամեծ նպաստումն ունեցած ոլորտներն են ծառայությունները և առևտուրը՝ համապատասխանաբար 2.7 և 2.6 տոկոսային կետ նպաստումներով: Դրական նպաստում են ունեցել նաև շինարարության և գյուղատնտեսության ոլորտները՝ շուրջ 0.7-ական տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտը շարունակել է ունենալ զգալի բացասական նպաստում, որի չափը կազմել է 3.8 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-մարտին, տոկոսային կետ



Գյուղատնտեսության ոլորտում հունվար-մարտին գրանցվել է վերջին տարիների ամենաբարձր տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ 10.5%: Նման բարձր աճը հնարավոր է պայմանավորված լինի եղանակային պայմաններով, սակայն առավել մանրամասն տեղեկատվությունը հնարավոր կլինի վերլուծել հունվար-մարտ ամիսների սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրական տվյալների հրապարակումից հետո:

1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում շարունակվում են գրանցվել խոշոր չափով անկումներ: 2025թ. մարտին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 16.9% անկում, որը, թեև մեղմվել է փետրվարի համեմատ, սակայն մնում է բավական խոր

անկման մակարդակում: Հունվար-մարտ ամիսների կուտակային անկումը կազմել է 18.5%՝ հունվար-փետրվարի համեմատ մեղմվելով 0.9 տոկոսային կետով: Արդյունաբերության անկումը հիմնականում բացատրվում է բազայի էֆեկտի դերով՝ պայմանավորված ոսկերչական արտադրանքի վերաարտահանմամբ, որի մասին ավելի մանրամասն ներկայացված է ստորև:

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-փետրվար ամիսներին[1] հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 26.2% անկմամբ, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 18.0 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, հանքարդյունաբերությունը նույնպես բացասական նպաստում է ունեցել արդյունաբերությանը՝ նվազելով 19.2%-ով և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստելով 2.9 տոկոսային կետով: Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղում գրանցվել է 10.7% աճ՝ ընդհանուր արդյունաբերությանը նպաստելով 1.6 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը գրեթե զրոյական է եղել:

Մշակող արդյունաբերության նվազումը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով՝ նախորդ տարվա ցուցանիշում ոսկու վերաարտահանման զգալի ծավալների առկայությամբ: Վերջինս արտացոլվել է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտի շուրջ 77.0% նվազմամբ, որի նպաստումը մշակող արդյունաբերության անկմանը կազմել է 31.8, իսկ ընդհանուր արդյունաբերության նվազմանը՝ 21.9 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության մյուս ենթաոլորտների շարքում էական նվազում է գրանցվել խմիչքների արտադրության ծավալներում՝ շուրջ 25.5%, որը մշակող արդյունաբերության անկմանը նպաստել է 2.5 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերությանը որոշակի դրական նպաստում են ունեցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «սննդամթերքի արտադրություն» ենթաոլորտները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.5 և 1.4 տոկոսային կետ: Մյուս ենթաոլորտների նպաստումները աննշան են եղել:

[1] Արդյունաբերության մարտ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպն արագանում է: 2025թ. մարտին շինարարության աճը կազմել է 15.5%՝ փետրվարի համեմատ արագանալով շուրջ 2.8 տոկոսային կետով: Ընդ որում, շինարարության ընթացիկ տարվա աճի տեմպերը շարունակում է բարձր մնալ նախորդ տարվա աճերից, ինչն անսպասելի էր, քանի որ հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ծրագրի գործողությունը սահմանափակվել է Երևանի տարածքում: Հունվար-մարտ ամիսներին շինարարության աճը կազմել է 13.6%՝ 1.4 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտի աճը նույնպես բարձր է, սակայն ունի դանդաղման միտում: Ծառայությունների ոլորտում 2025թ. մարտին գրանցվել է 10.1% աճ, որը հունվարի համեմատ դանդաղել է 2.0 տոկոսային կետով: Հունվար-մարտ ամիսների աճը կազմել է 11.5%՝ հունվար-փետրվարի համեմատ դանդաղելով 0.9 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը հունվար-փետրվար[2] ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է ֆինանսական և ապահովագրական գործունեության շուրջ 21.5% աճով, որի նպաստումը կազմել է 6.8 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև «տեղեկատվություն և կապ», «անշարժ գույքի հետ կապված գործունեություն», «կացության և հանրային սննդի կազմակերպում» և «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» ուղղությունները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.4, 0.7, 0.6 և 0.5 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպն էականորեն դանդաղել է: Առևտրի ոլորտում աճը շարունակել է դանդաղել և 2025-ի մարտին կազմել է 3.2%՝ փետրվարի համեմատ դանդաղելով 2.8 տոկոսային կետով: Նախորդ տարվա առևտրի աճերը բավական բարձր էին (2024թ. մարտին առևտրի ոլորտի աճը կազմել է 30.4%)՝ պայմանավորված նաև ոսկու վերաարտահանման առկայությամբ:

[2] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[3]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալները էականորեն նվազել են նախորդ տարվա համեմատ: 2025թ. մարտին արտահանման անկումը կազմել է 65.4%, իսկ հունվար-մարտ ամիսների կուտակային անկումը՝ 61.8%: Անկման նման մեծ ծավալները հիմնականում պայմանավորված են ոսկու վերաարտահանման ծավալների չեզոքացմամբ:

Արտահանման անկումը, ըստ հունվար-փետրվար ամիսների ցուցանիշների[4], մեծապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (որը հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 82.1%-ով նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 57.4 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանը զգալիորեն նպաստել են նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի անկումները: Դրանց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.8 և 1.1 տոկոսային կետ: Արտահանմանը փոքր դրական նպաստում են ունեցել «պատրաստի սննդի արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց նպաստման չափերը կազմել են համապատասխանաբար 1.9 և 0.6 տոկոսային կետ: Մնացած ապրանքախմբերի նպաստումներն արտահանման աճին բավական փոքր են եղել:

[3] Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[4] Արտահանման մարտ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Հատկանշական է, սակայն, որ անգամ առանց ոսկու վերաարտահանման 57.4 տոկոսային կետ բացասական նպաստման, արտահանման աճը շարունակում է մնալ բացասական՝ շուրջ -2.4%, ինչը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսության արտահանելի ոլորտում առկա են էական խնդիրներ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման ծավալի նվազումը նույնպես էականորեն մեծ է: 2025թ. մարտին ներմուծումը նվազել է 51.2%-ով՝ կրկին հիմնականում պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալներով: Հունվար-մարտի ներմուծման կուտակային նվազումը կազմել է 47.9%:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-փետրվար ամիսների ցուցանիշների[5], առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 86.7% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 47.6 տոկոսային կետ: Ներմուծման անկմանն էականորեն նպաստել են նաև «մանածագործական իրեր», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի անկումները՝ որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.8-ական և 0.5 տոկոսային կետ:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի աճերը, որոնց դրական նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.1, 0.7 և 0.4-ական տոկոսային կետ:

[5] Ներմուծման մարտ ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[6]

Անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակում է դանդաղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 4.1%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղել է 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 281,428 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 3.7%-ով՝ կազմելով 307,471 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի բարձր տեմպով՝ 4.6%-ով՝ կազմելով 215,975 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-փետրվարին, %



[6] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ-ի կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)







2025թ. մարտին ՀՀ դրամը որոշակիորեն արժևորվել է դոլարի նկատմամբ և արժեզրկվել եվրոյի և ռուբլու նկատմամբ: Մարտին ՀՀ դրամը փետրվարի համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է՝ 1 դոլարի դիմաց դրամի փոխարժեքը 396-ից դարձել է 393, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է՝ եվրոյի համեմատ 412-ից դառնալով 425 դրամ, իսկ ռուբլու համեմատ 4.3-ից՝ 4.6 դրամ:

Սակայն, եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-մարտ ամիսներին նշված բոլոր արժույթների համեմատ արժևորված է եղել: Այսպես, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժևորումը կազմել է 2.0%, եվրոյի նկատմամբ՝ 5.2% իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 4.0%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճը նույնպես կտրուկ դանդաղել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը մարտին կազմել է 1.8%՝ փետրվարի համեմատ դանդաղելով 8.6 տոկոսային կետով, իսկ հունվար-մարտ ամիսների աճը կազմել է 13.8%՝ դանդաղելով 7.4 տոկոսային կետով:

Բյուջեի եկամուտների հունվար-մարտ ամիսների աճը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճի տեմպով, որը ևս էականորեն դանդաղել է՝ հունվար-փետրվարի 22.5%-ից հունվար-մարտին հասնելով 13.2%-ի և ընդհանուր եկամուտներին նպաստելով 12.6 տոկոսային կետով:

Ոչ հարկային եկամուտները աճել են 22.7%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը աճել են շուրջ 3.6 անգամ՝ 1.1 մլրդ դրամով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը[7], %



2025թ. հունվար-մարտին հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 27.1%), եկամտային հարկը (աճը՝ 12.4%) և շահութահարկը (աճը՝ 21.8%)՝ համապատասխանաբար 8.9, 3.7 և 2.2 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում է ունեցել բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերի

[7] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

նվազումը, ինչը պայմանավորված է մարտ ամսվա ընթացքում նախորդ ամիսներին վճարված վճարների վերադարձով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. Հունվար-մարտ		2025թ. Հունվար-մարտ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**5.8**	**5.8**	**13.2**	**13.2**
Ավելացված արժեքի հարկ	-0.8	-0.3	27.1	8.9
Ակցիզային հարկ	-7.4	-0.5	-5.4	-0.3
Շահութահարկ	30.1	2.5	21.8	2.2
Պետական տուրք	18.7	0.5	15.3	0.5
Մաքսատուրք	9.7	0.3	1.2	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	20.8	0.5	-	-2.9
Այլ հարկեր	5.5	0.2	-4.4	-0.2
Շրջանառության հարկ	16.5	0.5	21.4	0.6
Եկամտային հարկ	4.0	1.2	12.4	3.7
Սոցիալական վճարումներ	20.3	0.9	11.1	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը 2025թ. մարտին արագացել է: Ընդհանուր ծախսերը 2025թ. մարտին աճել են 24.1%-ով (նախորդ ամսվա նվազումից հետո)՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի 25.8% և կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) 14.0% աճով:

Հունվար-մարտ ամիսներին ծախսերի աճը կազմել է 9.6%, որին ընթացիկ ծախսերի նպաստումը կազմել է 7.7 տոկոսային կետ, իսկ կապիտալ ծախսերինը՝ 1.9 տոկոսային կետ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեն հունվար-մարտ ամիսներին եղել է հավելուրդային: 2025թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները գերազանցել են ծախսերին, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 21.2 մլրդ դրամի չափով հավելուրդ, որը շուրջ 50.4 մլրդ դրամով նվազել է նախորդ ամսվա համեմատ:

5.4. Պետական պարտք

2025թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա մարտի համեմատ աճել է 11.7%-ով՝ հասնելով 13.6 մլրդ ԱՄՆ դոլարի: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 12.4%-ով՝ կազմելով 13.1 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 14.6%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 9.8%-ով: Արտաքին պարտքի աճը պայմանավորված է եղել մարտ ամսվա ընթացքում 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով և 10 տարի ժամկետով արտարժութային պարտատոմսերի թողարկմամբ:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակում են նվազել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. մարտին կազմել է 8.2%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.4 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը կազմել է 9.4%՝ նվազելով 0.4 տոկոսային կետով: Մարտ ամսին տեղաբաշխված կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են նաև փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 0.2 և 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը շարունակել է արագանալ: 2025թ. մարտին գնաճը արագացել է նախորդ ամսվա համեմատ՝ հասնելով 3.3%-ի՝ գտնվելով ԿԲ-ի թիրախի՝ 3±1%-ի շրջանակներում: Գնաճային միջավայրը հաշվի առնելով՝ ՀՀ ԿԲ-ն չի շարունակել տոկոսադրույքների բարձրացման քաղաքականությունը՝ մարտին կայացած նիստի ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնելով նույն մակարդակում:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդները շարունակում են աճել բարձր տեմպով: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. մարտին նախորդ տարվա մարտի համեմատ աճել է 13.9%-ով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 16.7% և 5.5%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



2025թ. մարտին ավանդների աճին ամենամեծ նպաստումն են ունեցել տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ավանդների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.7 և 5.0 տոկոսային կետ:

6.3. Վարկեր

Վարկերի աճը շարունակել է արագանալ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 30.0%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Վարկերի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի 29.4% և 43.9% աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 28.4 և 1.6 տոկոսային կետ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում աճել են ինչպես տնային տնտեսություններին, այնպես էլ իրավաբանական անձանց տրամադրված վարկերը: Դրանք ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալի աճին նպաստել են համապատասխանաբար 14.8 և 14.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[8]



2025թ. մարտին վարկերի աճին դրական են նպաստել գրեթե բոլոր ոլորտների վարկերի աճերը, սակայն առավել նշանակալի են եղել հիպոթեքային (աճը՝ 35.0%) և սպառողական (աճը՝ 27.6%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 7.6 և 6.3 տոկոսային կետով:

[8] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[9]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) 2025թ. բավական ցածր է եղել նախորդ տարվա համեմատ: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազել է շուրջ 43.1%-ով (կազմելով ընդամենը 87.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի 153.9 մլն ԱՄՆ դոլարի դիմաց)՝ հիմնականում պայմանավորված արտահոսքի շուրջ 22.7% աճով: Դրամական միջոցների համախառն ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է 9.6%-ով՝ կազմելով 845.3 մլն ԱՄՆ դոլար:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպն էականորեն դանդաղել է: Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղումը հիմնականում պայմանավորված է համեմատվող ցուցանիշներում ոսկու վերաարտահանման ազդեցության, ինչպես նաև նախորդ տարիներին բարձր աճ ապահովող գործոնների չեզոքացմամբ: Վերջինս սպասելի երևույթ էր, և նման միտումների պահպանման պարագայում տնտեսական աճը տարվա համար կառավարության կանխատեսումներից ավելի ցածր կլինի:

2. Արտահանման ծավալները էականորեն նվազել են: Արտահանման անկումը հունվար-մարտին կազմել է 61.8%՝ հունվար-փետրվարի համեմատ

[9] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2025թ. մարտ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

վատթարանալով 2.6 տոկոսային կետով: Մտահոգիչ է, սակայն, այն, որ արտահանման նվազումը պայմանավորված է ոչ միայն ոսկու վերաարտահանման չեզոքացմամբ, այլ նաև մյուս ապրանքախմբերի արտահանման անկումներով կամ ցածր աճերով: Այսպես, եթե չդիտարկենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստումը, ապա արտահանման աճը, միևնույն է, բացասական է՝ -2.4%, ինչը ցույց է տալիս, որ խնդիրներն ավելի խոր ու մտահոգիչ են:

3. Գնաճի տեմպը բավական արագ է բարձրանում: Բավական երկար ժամանակ ցածր գնաճային միջավայրից հետո գների աճի տեմպն արագորեն մեծանում է՝ մարտին հասնելով 3.3%-ի: Այդ պայմաններում կենտրոնական բանկն արդեն իսկ դադարեցրել է տոկոսադրույքի նվազեցման քաղաքականությունը: Գնաճի հետագա արագացումը, տնտեսական աճի դանդաղման պայմաններում, կարող է բացասաբար ազդել բնակչության կենսամակարդակի վրա:

4. Վարկերի աճի տեմպը շարունակում է արագանալ: Տնտեսական աճի գրանցված մակարդակի, ինչպես նաև բնակչության եկամուտների ցածր աճերի պայմաններում վարկերն աճում են շուրջ 30%-ով: Ընդ որում, վարկերի աճին հիմնականում նպաստում են սպառողական և հիպոթեքային վարկերը, որոնք հետագա տարիներին տնտեսական արդյունք չեն գեներացնելու: Հետևաբար, վարկերի նման բարձր աճերը մտահոգիչ են և կարող են պարունակել ֆինանսական համակարգի կայունության հետ կապված ռիսկեր:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: